




ՄՐԱՎՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒՅՈՒՆԸ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻՍ



ոկտեմբերի 8, շաբաթի Այսօր Ս. Էջմիածնում կատարվելու է Սրբալույս Մեռոնի օրհնություն— ահա առաջին միտքը, որ վաղ առավոտյան մեխվում է ուղեղում:

Ճանապարհ ենք ընկնում դեպի Ս. Էջմիածին:

Աշնանային պայծառ առավոտ է: Չորս կողմը աշունն է, Արարատյան աշխարհի ոսկեվարս, մրդառատ աշունը: Խոխողում են պարզ, աշնանային ջրերը: Հեռվում, երկնքի կապույտի վրա, անքթիթ խոկում են Մասիսները, մինչ մեր մեքենան այգիների միջով սլանում է դեպի Էջմիածին: Ահա Զվարթնոցի ավերակները, Հոփսիսի մեր տաճարը, երևացին արդեն Ս. Էջմիածնի գմբեթները, Ս. Գայանեն, Ս. Շողակաթը— հնությունների բրիստոնեական մի ամբողջ աշխարհ:

Մեր մեքենան կանգ է առնում հնադարյան Ս. Էջմիածնի նորաշեն պարիսպների մոտիկ: Իջնում ենք և պարիսպներից ներս մտնում: Առաջին բանը, որ աչքի է զարնում, դա ժողովրդի հոծ բազմությունն է, որը բռնել է ամբողջ վանքի բակը և պարիսպներից ներս եղած ողջ տարածությունը: Հայ ժողովրդի ղանաղան բարբառներով խոսող, տարբեր շրջաններից, տարբեր տեղերից ու վայրերից Էջմիածին լցված բազմամբոյս զանգվածները այսօր կազմում են մի միասնական ամբողջություն: Ուստավորներ են եկել Թբիլիսիից, Բաքվից, Ռոստովից, Հյուսիսային Կովկա-


սից, Երևանից, Հայաստանի տարբեր շրջաններից: Սրբալույս Մեռոնի օրհնության ազգային-եկեղեցական մեծ հանգեսին մասնակցելու համար, գաղթաշխարհի հայ ուստավորներն էլ այսօր կտրել է հաղարավոր մղոններ, անցել գետեր, ցամաքներ, ծովեր, աշխարհի մի ծայրից մյուս ծայրն է հասել: Ս. Էջմիածինը քաշել, բերել է նրանց բոլորին իր սիրասուն մայրական գիրկը, իր մեռունաբույր օրհնությունն ու սերը բաշխելու: Էջմիածին... Մեր նախնայաց լուսեղեն երազն ու կարոտն է հեղվել նրա մեջ, քարեղեն աղոթք է Ս. Էջմիածինը:

Հայ մարդը, ի սիյուտա աշխարհի ցրված հայ տարազիրը, իր սրտում ունի երկու սրբություն— Ս. Էջմիածին և Հայրենիք: Դրանցով են բաբախում հայ սրտերը, դրանցով է հայը հայ մնում, ապրում և գոյատևում:

Հայ հավատացյալ մարդու համար ազգային-եկեղեցական ամենամիլրական տոնն է Ս. Մեռոնի օրհնության հանգեսը: Նա հավատում է, որ Ս. Մեռոնը իր սկիզբն է առել Ս. Գրիգոր Լուսավորչից, որ ամեն անգամ, երբ նոր մեռոնի հետ խառնում ենք հինը, այդ Ս. Լուսավորչի օրհնած մեռոնն է, որ անցնում է նորին ու այսպիսով հայի հեռավոր անցյալը կապվում է նրա ներկային:

Քրիստոնեական եկեղեցիներից ոչ մեկը չունի Ս. Յուզի՝ Մեռոնի գործածությունը այնքան, որքան Հայ եկեղեցին։ Հայ եկեղեցում Ս. Մեռոնով սրբազործվում են տաճարները, եկեղեցական առարկաները, սպասները, Ս. Մեռոն է օգտագործվում մկրտության ժամանակ, քահանայի, եպիսկոպոսի և Կաթողիկոսի օծումը կատարվում է Ս. Մեռոնով։ Ս. Մեռոնով օծյալը Ս. Հոգու շնորհքն է ստանում, սրբվում, մաքրվում, սրբանում։

Վերջին անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ս. Մեռոնի օրհնություն է կատարվել 1926 թվականին, Գևորգ Ե. Կաթողիկոսի օրով։ Երկարատև ժամանակաշրջան է բաժանում հավատացյալներին այդ օրվանից. 29 տարի է, որ չի կատարվել հայ հավատացյալի սրտին այնքան մոտիկ նվիրական ու խորհրդավոր սուրբ արարողությունը, զրկված պահելով նրան հոգևոր բարձր, ուրախարար մխիթարությունից։



Պատվիրակներն ու հյուրերը երկյուղածությամբ հետևում են մեռնօրհնության արարողություններին

Ս. Մեռոնի օրհնությունը, Հայ եկեղեցու դարավոր նվիրական օրհնքների համաձայն, վերապահվում է միայն Հայոց Հայրապետին։ Հայ եկեղեցում առաջին անգամ Ս. Մեռոն է օրհնվել Ս. Էջմիածնում, Ս. Լուսավորչի ձեռքով։

Մենք այսօր շունենք մանրամասն տեղեկություններ այն մասին, թե ե՞րբ և ի՞նչպես է օրհնել Ս. Մեռոնը առաջին անգամ Ս. Գրիգոր Լուսավորիչը։ Բայց մի բան պարզ է, որ Ս. Մեռոնօրհնության ծիսական կազմը հետզհետե կատարելագործվել է և մեր օրերն է հասել լրիվ կարգավորյալ վիճակում։

Նորին Ս. Օծություն Վաղգին Ա. նորընտիր Կաթողիկոսի օծման կապակցությամբ, որոշվեց կատարել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նաև Սրբալույս Մեռոնի օրհնություն։

Տաճարում շարժվելու հնար չկա։ Պայծառ վառվում են կանթեղներն ու ջահերը։ Հովնաթանյան մանրանկարները իրենց վերականգնված գեղեցկության մեջ կենդանի են և խոսում։ Հայ մանրանկարչության հատուկ վառ կարմիրը, լաջվարդ կապույտը, ոսկին միահյուսվելով իրար, գույների մի կենսա-

խինդ աշխարհ են ստեղծել: Ներսես և մրտնոմ Տաճար և մի անպատմելի ուրախարար զգացում պատում է ողջ էությունդ: Չգիտես ինչի՞ց է այդ, օրվա հանդիսավորությունների՞ց, թե՞ Տաճարի մանրանկարների կենսախինդ, կենսաթրթիւ գույներից: Ավագ Սեդանի վրա Ս. Մեռոնի արծաթյա կաթսան է դրված, ծածկված՝ ոսկեհյուս թանկագին դիպակի ծածկոցով:

Մեռոնօրհնության սահմանված օրվանից քառասուն օր առաջ Ս. Մեռոնի կաթսան, ձիվենու մաքուր յուղով լի, գրվում է Մայր Տաճարի Ավագ Սեդանի վրա և ամեն օր, երեկո-

«Եւ եթէ ի նիւթոց անտի և ի ծաղկանց մին կամ երկուսն կամ երեքն պակաս լիցի՝ մի՛ արգելիսցես զՄեռոնի օրհնութիւնն. քանզի զկատար նիւթ Սրբոյ Մեռոնին համարի ձէթ ի ձիթենեաց և իւղ պալատանի»:

Բալասանը փշատանման ծառի կեղևի տակից ծորող անուշահոտ մի հեղուկ է, որը բերվում է Պաղեստինից կամ Հնդկաստանից: Բալասանը հատուկ պատրաստության է ենթարկվում նախքան նրա գործածությունը: Մանրակրկիտ մշակման են ենթարկվում նաև Ս. Մեռոնի օրհնության համար գործածվող մյուս նյութերը նույնպես:



Վեհափառ Հայրապետը հեղում է էին մեռոնը նորի մեջ

յան ժամերգությունից հետո, պաշտոն է կատարվում շարականներով և քարոզ-աղոթքներով:

Մեռոնօրհնությունից շատ առաջ հայթայթվում են Ս. Մեռոնի բաղադրիչ մասերը՝ ձիթապտղի ընտիր յուղը, բալասանը և 44—45 տեսակ անուշահոտ խնկեղեններ, ծաղիկներ, անուշահոտ բույսերի արմատներ, ծաղկահյութեր, յուղային հյութեր, հոտավետ դանազան տերեւներ և այլն: Անպայման անհրաժեշտություն չէ իհարկե բոլոր նյութերի գործածությունը Մեռոնօրհնների ժամանակ. նյութերի մեջ կան երկրորդականներ, որոնց բացակայությունը արգելք չի կարող դառնալ Ս. Մեռոնի օրհնությանը:

«Յաղագս եփելոյ զնիւթս Սրբոյ Մեռոնին» վերնագրի տակ, մեռոնօրհնության մաշտոցում կարդում ենք հետևյալը.

«Զնիւթքս ուրոյն ուրոյն ծեծեալ և լոսեալ մանրեա՛ և մաղեա՛, և ա՛ռ զշափաւոր կաթսայ մի, ծեփեա՛ խմորով զմէջն, և ա՛րկ ի նա իւղ ձիթենեոյ և գինի, և զնիւթս ծաղկանցն, և դի՛ր ի բերան կաթսային սկզուող մի և խմորով ծեփեա՛, և քար մի լորաշափ ծանրութեամբ դի՛ր ի վերայ սկտեղն, զի հաստատուն մնացէ, և ի ներքոյ կաթսային վառեա՛ հուր և յործամ սկսանիցի լեռ դալ և եփել, ապա սակաւացո՛ւ՝ զհուրն և թո՛ղ շորս կամ հինգ խանձողս և ոչ աւելի: Եւ աշապէս հանդարտութեամբ եփեա՛ դաւուրս երկուս

զտիւս և զգիշերս և երբեմն բա՛ց և խառնեա՛, զի մի՛ գուցէ ի յատակն մաժնուցու Ասլա յետ երկուց ատուրց ի բա՛ց առ ի հրոյն և կացցէ զաւուրս երկուս մինչև քաջ պարզեսցի, ապա քամեա՛ մաքուր կտաւօք, զմասն ինչ ա՛րկ ի յատկացեալ յանօթն և պահեա՛ աւուր օրհնութեան Մեռոնին, զմնացեալն յառաջագոյն խառնեա՛ ի մեծ կաթսայ իւղոյ ձիթենույն, բայց և զայն նախ եռացո՛ հրով և զխառնելի նիւթսն ևս՝ զոր եփեալ և քամեալ ես, նոյնպէս ջեռո՛ և ապա խառնեա՛, զի բարուք զանգեալ միաւորեսցին»:

Այս բոլոր նախապատրաստութիւնները նախօրոք կատարվել էին ավագ լուսարարի և միաբնակչութեան անդամների անմիջական մասնակցութեամբ:

Ներհանգիստավորապես տանում են հայրապետական խորհրդանշանները, ապա գալիս են 12 եպիսկոպոսները հանգիստավոր ու շքեղ զգեստավորված, 6-ը առջևից և 6-ը ձախից՝ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան (Եգիպտոս), Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան (Հյուսիսային Ամերիկա), Վարդան արքեպիսկոպոս Գասպարյան (Կալիֆորնիա), Միոն եպիսկոպոս Մանուկյան (Հարավային Ամերիկա), Հայրիկ եպիսկոպոս Ասլանյան և Հայկազուն եպիսկոպոս Արրահամյան (Երուսաղեմի Պատրիարքութիւն), Դերենիկ եպիսկոպոս Փոլատյան (Կիլիկիայի Կաթողիկոսութիւն), Սերովբե եպիսկոպոս Մանուկյան (Ֆրանսիա), Շնորհք եպիսկոպոս Գալստյան (Կալիֆորնիա), Սահակ



Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի աջով պատրաստվում է խառնելու Սրբալույս Մեռոնը

Կեսօր: Տաճարում հեղձուցիչ շոգ է:


Մայր Տաճարի զանգերը հնչում են, մարդկային ծովը ալիկոծվում է:

Վեհարանի դարբասներից ծայր է առնում եկեղեցական մեծաշուք թափորը: Առջևից ընթանում են արծաթագլուխ գավազանները ձեռքներին կարմրազգեստ շաթիրները, ապա խաչվառակիրներն ու խաչակիրները, կերտակիրներն ու քրոջակիրները, դպիրները, սարկավազները, ամբողջ միաբանությունը շուրջառազգեստ: Երկու վարդապետ-

եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան և Եղնիկ եպիսկոպոս Աղնավուրյան (Էջմիածնի միաբանություն): Նրանք իրենց ձեռքներին են վերցրել Մայր Աթոռի պատմական սրբությունները՝ արծաթապատ Ս. Ավետարան, Ս. Մեռոնի նյութերի անոթը (բալասան և ծաղկի հյութեր), հին Մեռոնով լի մեռոնաղանին, Ս. Կենաց փայտը, աստվածամուկ Գեղարդը, Ս. Գրիգոր Լուսավորչի աջը, Ս. Հակոբ Մծրնա հայրապետի աջը, Ս. Թադեոս առաքյալի աջը, Ս. Թովմա առաքյալի աջը և այլն:

Հայրապետական ամպհովանու տակ մտած դալիս է Վեհափառը պատարագի լրիվ դգեստավորմամբ, հայրապետական գավազանն ու խաչը ձեռքին: Նրա առջևից տարվում է հայրապետական քողը: Զույգ բուրվառակիր վարդապետներ խնկարկում են Վեհափառին: «Խորհուրդ խորին» սքանչելի շարականի հնչյունները փոթորկում են հոգիները. որքա՜ն խոհ, զգացում ու հոգի է դրել նրա մեջ եկեղեցական բանաստեղծը:

Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հ. Գ. Գրիգորյանը: Ներկա են Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Պիտիրիմը, Պսկովի և Պրիսովի եպիսկոպոս Բոաննը, Բաթումի-Շեմոկմեդիի և Զկոնդիդիի միտրոպոլիտ Եփիմը:



Հավատացյալ ժողովուրդը համբուրում է Մրբալույս Մեռոնի կաթսան

Արևի ճառագայթների տակ, երփներանգ գույներով շողշողում է անցնող թափորը. այն պատկառազդու է և վեհություն ներշնչող:

Թափորը ներս է մտնում Մայր Տաճարի ավագ դռնից:

Ավագ Ս. Սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը կատարում է լվացման կարգը և ապա 12 եպիսկոպոսների ուղեկցությամբ բարձրանում է Ս. Սեղանը: Սկսվում է հայրապետական մեծաշուք պատարագը: Դասում երգում է քառաձայն երգեցիկ խումբը:

Մեռոնօրհնության այս մեծաշուք հանդեսին ներկա են Ազգային-եկեղեցական ժողովի աշխարհիկ և կրոնական բոլոր պատգամավորները և հյուրերը: Ներկա են ՍՍՌՄ

Վեհափառ Հայրապետին սպասարկում են մի քանի եպիսկոպոսներ: Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուր միմեանց», ապա Վեհափառը դեմքը դարձնելով արևմուտք, շրջապատված 12 եպիսկոպոսներով, բազմում է հայրապետական աթոռին և սկսում է Ս. Մեռոնի օրհնության կարգը:

Սկզբում եպիսկոպոսները կարդում են Ս. Գրքի մի շարք ընթերցվածներն ու առաքելական թղթերը, Ավետարանը: Բաղական է ուշի ուշով լսել այդ ընթերցումները, որպեսզի մարդ լրիվ գաղափար կազմի Սուրբ Յուդի (Մեռոնի) հնում խրայելացիների մոտ ինչ նշանակություն ունենալու մասին, նրա գործ-

ածման եղանակի, օգտագործման, պատ-
րաստման կերպի և սրբագործող, մաքրող
նշանակության մասին:

Այնուհետև սկսում է աղոթքների ընթեր-
ցումը Կաթողիկոսի կողմից: Երբեմն-երբեմն
լսվում են դպիրների մեղմանուշ ձայնը, սար-
կավազների օրհներգությունները, բուրվա-
ռակիրների համաշափ խնկարկումը:

Հայրապետը շարունակում է ընթերցումը.

«Արդ զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ
եղիցի իւլս այս՝ իւղ ցնծութեան, գշտտ լու-
սաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն
հոգւոյ և մարմնոց, շնորհք հոգւորական,
պահապան կենաց, կնիք արդարութեան, գէն
հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամե-
նայն գործոց բանսարկովին. ոգւոց փրկու-
թիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւի-
տենական, զի որ ոք օծցի ի սմանէ՝ վերստին
ծննդեան իւղովս, երկիւղած լիցի յԱստուծոյ
և աներկիւղ ի հակառակորդէն»:

Ս. Յուլի սրբագործման, օրհնության
աղոթքները շարունակվում են:

Որքա՛ն տեսիլքի, երկնային գեղեցիկ ապ-
րումի տեր են ելել մեր երանելի նախնիքը,
հենց թեկուղ մեռնօրհնության սրբազան
աղոթքների մեջ: Լսում ես ու չես սպառում
նրանցում եղած վեհագույն խորհուրդը՝ աստ-
վածաշնչյան համեմատությունները, փրկի-
ստփայական իմաստն ու ներշնչումը:

Ս. Մեռոնը հոգեղեն կերակուր է համար-
վում այդ աղոթքների մեջ.

«Արդ՝ աշխիւ և մեք պատրաստելով զսա որ-
պէս կաթն՝ մատուցանեմք, զի ամենեքեան
որ ի սմանէ առնուցուն՝ արժանի լիցին ըն-
դունել զհաստատուն կերակուր, զճշմարիտն,
զերկնայինն՝ ի շնորհաց Միածնի Քո Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի...»:

Մի առժամանակ Վեհափառի աղոթքները
ընդհատվում են Ս. Գրոց ընթերցումներով,
Ավետարանով: Երգվում է մեռնօրհնության
մեղեդին:

Ամեն, ամեն ինչ այսօր բացահայտում է
Ս. Յուլի նշանակությունը, դերն ու տեղը ժո-
ղովուրդների կրոնական կյանքում:

Չէ՞ որ աշխարհի Փրկիչը չընդդիմացավ իր
վրա հեղված թանկագին յուղի համար. «Ա-
մէն ասեմ ձեզ, ուր և քարոզեսի Աւետարանս
այս ընդ ամենայն աշխարհ, և զոր արար
դա խօսեսի վասն յիշատակի դորին»: Ահա
և Ս. Յուլի ամետարանական օրինագրումը:

Ս. Մեռոնի կաթսայի կափարիչը Ֆախբան
բաց անելը, Վեհափառը կարգում է մի երկար
աղոթք: Այդ աղոթքի մեջ մեկ առ մեկ հիշա-
տակված են Հին Ուխտի բոլոր նահապետ-

ները, մարգարեները և թագավորները, սկը-
սած Նոյից, որոնք այս կամ այն օրինակով
խոսում են Ս. Յուլի օծման սրբարար նշա-
նակության մասին, նրա բազմաթիվ դործա-
ծությունների մասին, ապա Նոր Կտակարանի
մեջ Հիսուսի, առաքյալների ասացվածքները
այդ առթիվ: Հայրապետի աղոթքի մրմունջ-
ները երկնային ցողի նման իջնում են նվի-
րագործված Ս. Յուլի վրա:

«...Զայս հիւթ օրհնութեան ձիթոյ՝ յորում
Սուրբ Երրորդութիւնդ խառնեալ միաւորի,
շնորհեցեր մեզ ճառագայթ հոգւոց, լուսաւո-
րութիւն մտաց, տեառնագրութիւն երեսաց,
պահապան շրթանց, զօրութիւն անձանց,
ախոյեան ընդդէմ դիւաց, փարատիչ ցաւոց,
պահպանումն կուսից, աճեցումն տղայոց,
պարարումն ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, և
պսակ թագաւորաց: Քանզի Մեռոնս այս օրհ-
նաբանեալ՝ հրաշագործէ արուեստս և սքան-
չելիս և զօրութիւնս զարմանաւորս»:


Կաթսայի կափարիչը բաց են անում, դպիր-
ները երգում են «Բացեր, Տէ՛ր, այսօր զգանձդ
երկնային» շարականը: Մինչ դպիրները եր-
գում են, Վեհափառը հանդիսավորապէս
կաթսայի մեջ է լցնում ծաղիկների հյութը և
ապա բալասանը: Այնուհետև նա իր ձեռքն
է վերցնում հին Մեռոնի մեռնամանը, «Առա-
քելոյ աղանոց» շարականի հնչյուններէ տակ
մաս առ մաս լցնում է հին Մեռոնը իր Մե-
ռոնի օրհնված կաթսան: Մի ակնթարթ ոսկե-
գույն կաթիլները շողում են օդում և վայր
թափվում: Տաճարը մի պահ քարանում է,
Մեռոնօրհնության ամենախորհրդավոր, վե-
հագույն պահն է: Հուլմունքից զոդում են
Հայրապետի ձեռքերը, իսկ կաթիլները թափ-
վում են անընդհատ: Այդ հին Մեռոնն է
խառնվում նորին և այդ խորհրդավոր ու
անկրկնելի պահին, երանելի նախնիաց սուրբ
հոգիները խառնվում, միանում, ամբողջա-
նում են, սրբացնում նորը: Այդ մի ժողովրդի
ամբողջ հեռավոր անցյալն է կապվում նրա
ներկային: Ս. Մեռոնով նա հաղորդակցվում
է իր նախնիաց, հայոց աշխարհի սուրբ նա-
հատակների անմահ հոգիների հետ: Սուրբ
Մեռոնը հայ հոգիների ոսկեղեն կամուրջն է,
հոգիների թուղթը, դարերի իմաստավորված
շաղկապը, հայ ժողովրդի միասնականու-
թյան անքակտելի հանգույցը, Ս. Մեռոնով
Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու
բոլոր զավակները ի մի են շաղկապվում,
զոդվում, ամբողջանում:

Ղողանջում են Տաճարի բոլոր դանդերը,
հոգիների հաղորդակցման այդ վեհաշունչ
պահին: Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի
աջով տյառնագրում է նոր Մեռոնը: Օրհներ-

գության ձայները թնդացնում են Տաճարի հնադարյան կամարները: «Օրհնեսցի՛ր և սրբ-
րեսցի Մեռնա այս, նշանաւ սուրբ խաչիս և
Սուրբ Աւետարանաւ և Սրբոյ Լուսաւորչի
աջովս և աւուրս շնարհիւ...»: Ս. Մեռոնը
այսուհասգրովում է նաև մյուս սրբություններով
և ապա նորից ծածկվում է կաթնայի
կափարիչը և վրան ձգվում դիպակն խա-
չանիշ ոսկեթել բանվածքը: Վեհափառը կար-
գում է վերջին դահաբանական աղոթքները:
«Քրիստոս Աստուած մեր՝ պարգևի՛շ աւտուա-
ծային օծութեան, սրբեա՛ղ զմեզ առ ի քէն
սրբութեամբն և արա՛ զմեզ հաղորդս պար-
գեաց Հոգւոյդ Քո Սրբոյ, որպէս զի կատա-

ցուք զՏէր...»: Վեհափառի «Պահպանիչ»ով
ավարտվում է Ս. Մեռոնօրհնության հանդե-
սը: Այնուհետև շարունակվում է սուրբ պա-
տարագը մինչև վերջ: Սուրբ պատարագի
ավարտվելուց հետո եկեղեցական դասը և
ապա ժողովուրդը ջերմեհանդ մոտենում և
մեկ առ մեկ համբուրում են Սրբալույս Մեռո-
նի կաթսան, իսկ դպիրները ծանր երգում են
Մեռոնօրհնության մեղեդին: Վեհափառը թա-
փորով ուղեւորվում է Վեհարան:

Դուրս ենք գալիս Տաճարից: Դրսում
արևատ, պայծառ օր է: Հազարավոր հավա-
տացյալներ: Զանգակատան շորս բոլո-
րը ճախրում, սահում են սպիտակ, ճեր-



Հավատացյալների հոծ բազմությունը Տաճարից դուրս հետևում է
մեռոնօրհնեֆի արարողություններին

րեսցի կարգս այս Սրբոյ Մեռոնիս, Տէր մեր
և Աստուած մեր յաւիտեանս»: «Եւ այժմ ծա-
ղեա՛ր ի սիրտս մեր զպարգեւ բարութեան Հո-
գւոյդ Սրբոյ, և հաղորդակիցս երեւցո՛ւ զմեզ
պարգեաց քոց սրբոց, վասն զի Դու իսկ ես
Մեռոն ամբիծ, և մաքուր, և անաղտ, որ հա-
նապաղ բուրեւս յանձինս սրբոց քոց...»:

Ապա եպիսկոպոսներից մեկը կարդում է
վերջին Ավետարանը: Մարկավագը քարոզում
է՝ «Ս. Խաչիս և Սուրբ Մեռոնաւ աղաչես-

մակաթույր աղաւնիներ: Խաղաղություն...
արև... մեռոնօրհնություն...: Դրսում դեռ
խորհրդավոր օրվա հանդիսակատարու-
թյունների անմոռանալի տպավորությունների
տակ եմ, երբ ուշադրությունս է գրավում մի
ալեհեր, խորշումած դեմքով ծերունի: Կու-
ցած, դողդոջուն ձեռքերով հող է լցնում նա
մի տոպրակի մեջ: Հայացքս սառչում է մի
պահ և ազահորեն կլանում տեսարանը... Ի՞նչ
մոտենա՞լ, հարցնե՞լ... առանց այդ էլ պարզ

է ամեն ինչ: Հողը, հայրենի սրբազան հողը առինքնող, մաքնիսացնող, խորհրդավոր այդ ուժը բացատրում է ամեն ինչ: Կերթա վաղը այդ ծերունին աշխարհի մի ծայրը, կերթա մի Ամերիկա, Եվրոպա, Հնդկաստան ասենք, ու կտանի իր հետ մի բուռ հող սրբազան երկրից, էջմիածնի մեռնաբույր շունչը կտանի ու ամեն մի հատիկը այդ հողի կղառնա սրբազան մասունք, իր մեջ կամփոփի ողջ Հայրենի երկիրը, կղառնա աշխարհք, ժողովուրդ, և Հայրենիքի սրբազան սիրո հուրը կհրահրի հայորդիների սրտում, կմխիթարի տարագրին, կսփոփի վիշտը...:

Ուրանալ հողը, նշանակում է ուրանալ Հայրենիքը, ուրանալ ժողովրդին:

Հայ ժողովրդի ղափակները իրար հետ կապված են հողով ու ջրով, Սրբալույս Մեռնով: Անքակտելի է այդ կապը, անխզելի է հոգևոր միության սրբազան այդ շաղկապը:

Երեկո է, երբ դուրս ենք գալիս Ա. էջմիածնից: Մայրամուտի ծիրանագույն շողերը այրում են հորիզոնը, հուրհրում, բոցկլում...:

Մի վերջին հայացքով բաժանվում ենք Մայր Տաճարից:

Երևանի ճանապարհին ենք, ու ամբողջ ճանապարհին, վերջալույսի շողքերով ոսկևորված, Մասիսներն են մեզ հետ ամենուրեք:

